

ՀՏԴ 342.7

**ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ
ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՄԵՂՔԸ**

ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Եվրոպական համալսարան

Հոդվածը նվիրված է վնասի հատուցման սահմանադրական իրավունքի գործողության պայմանների ներկայացմանը: Հետազոտվել է նաև հանրային-իշխանական լիազորությունների իրականացման ընթացքում ի հայտ եկած վնասը պատճառած իրավունքի սուբյեկտի հարցը, որի պարզաբանումն այդ գործում ունի զգալի կարևորություն:

Նշվածի լույսի ներքո՝ քննարկման հատուկ առարկա է դարձել պաշտոնատար անձի մեղքի նշանակությունը, ում կողմից անմիջապես իշխանական լիազորությունների իրականացումը հանգեցրել է վնասի պատճառմանը: Այս նպատակով հոդվածում ներկայացվել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան պրակտիկան, որի հաշվառմամբ էլ կատարվել են քննարկվող իրավական հարցի վերաբերյալ եզրահանգումները:

Բանալի բառեր. վնաս, պատասխանատվություն, հանրային իշխանություն, պաշտոնատար անձ, մեղք, թերացում, հիմնական իրավունքներ:

«Հ սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով [1]:

Սահմանադրությամբ հատուկ նախատեսվում է, որ անձն իրավունք ունի պահանջելու հատուցել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետև՝ ՏԻՄ) ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ արարքների (օրենքով նախատեսված դեպքերում նաև իրավաչափ վարչարարության) հետևանքով իրեն պատճառված վնասը. այս իրավունքը դասվում է մարդու հիմնական իրավունքների շարքին:

Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմնական իրավունքների միակ հասցեատերը հանրային իշխանությունն է, հետևաբար մասնավոր անձինք նույնիսկ բացառության կարգով հիմնական իրավունքների հասցեատեր լինել չեն կարող [2, էջ 10]:

Վնասի հատուցման իրավունքը, այսպիսով, հանդիսանում է մարդու հիմնական իրավունքներից մեկը, ինչը նշանակում է, որ այդ իրավունքի

հասցեատերը հանդիսանում է հանրային իշխանությունը՝ պետությունը և համայնքը: Ելնելով նշվածից՝ օրենսդրությամբ արդեն նախատեսվում է, որ պետական կամ ՏԻՄ-երի ու պաշտոնատար անձանց պատճառած վնասը հատուցում են համապատասխանաբար պետությունը և համայնքը (ընդհանրական կերպով այսուհետև՝ նաև հանրային-իրավական միավորում):

Ընդհանուր կանոնի համաձայն՝ իրավական պատասխանատվության ծագման պայմաններից մեկը հանդիսանում է վնասը պատճառած սուբյեկտի մոտ մեղքի առկայությունը: Միաժամանակ, իշխանական բնույթի ցանկացած գործունեություն անմիջապես իրականացվում է համապատասխան իրավասությամբ օժտված պաշտոնատար անձանց կողմից:

Սահմանադրությունն իր հերթին ուղղակիորեն չի անդրադառնում պատճառված վնասի դիմաց հանրային իշխանության սահմանադրական-իրավական պատասխանատվության ծագման հարցում որևէ սուբյեկտի մեղքի ունեցած նշանակությանը:

Հաշվի առնելով նշվածը և իշխանության ակտով վնասը պատճառելու դեպքին վերաբերող առանձնահատկությունները՝ հոդվածում քննարկվել են վնասի հատուցման սահմանադրական իրավունքի գործողության հարցում այն պաշտոնատար անձանց մեղքի, այսինքն՝ սեփական վարքագծի և դրանց հետևանքների նկատմամբ ունեցած հոգեբանական վերաբերմունքի (դրսևորման ձևն էական չէ), նշանակությունը, ում գործողությունները կամ անգործությունը հանգեցրել են անձի իրավունքների խախտմանը, և որի հետևանքով պատճառվել է վնաս: Հաջորդիվ փորձ է արվել հիշյալ սահմանադրական իրավունքի գործողության պայմանների վերաբերյալ գալ որոշակի ամփոփ եզրահանգումների:

Վնասի հատուցման հարցում հանրային իշխանության պաշտոնատար անձի մեղքի ունեցած դերը քննարկելու համար՝ առաջին հերթին անհրաժեշտ է եզրահանգման գալ այն խնդրի շուրջ, թե ձևական-իրավական առումով ով է հանդիսանում վնասը պատճառած սուբյեկտը:

Հանրային իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության հետևանքով ի հայտ եկած վնասը պատճառած սուբյեկտի հարցին կարելի է մոտենալ հետևյալ ուղղություններով.

1. քանզի վնասը փաստացի ի հայտ է եկել որոշակի պաշտոնատար անձի (անձանց) գործողությունների կամ դրսևորած անգործության արդյունքում, ապա վնասը պատճառողը հենց վերջինս է:

Այս ընկալման պարագայում, պաշտոնատար անձի կողմից պատճառված վնասը հատուցելիս հանրային-իրավական միավորումը ընդամենը հանդես է գալիս որպես նրա փոխարեն պատասխանատվություն կրող սուբյեկտ, այլ կերպ՝ վնասի հատուցման պարտականությունը դրվում է այն չպատճառած սուբյեկտի վրա:

Վնասի հատուցումն այն չպատճառած սուբյեկտի վրա դնելու կառուցակարգի կիրարկման կարևորագույն նախապայմաններից մեկն այն է,

որ վնասը պատճառած անձը պետք է ինքը ենթակա լինի իրավական պատասխանատվության, որպեսզի այն հաջորդիվ փոխադրվի այլ սուբյեկտի վրա: Այս առումով տեղին են զուգահեռներն աշխատողի պատճառած վնասի դիմաց գործատուի քաղաքացիաիրավական պատասխանատվության սահմանման հետ [3, էջ 21]:

Հենց այս իրավիճակում էլ առանցքային է դառնում պաշտոնատար անձի մեղքի առկայության հարցը, քանի որ վնասի հատուցման իրավահարաբերությունների ծագման չորս հանրահայտ նախապայմաններից մեկը, ինչպես նշվեց, վնասը պատճառած անձի մոտ մեղքի առկայությունն է:

Եթե ելնում ենք, որ վնասը պատճառել է պաշտոնատար անձը, ապա վնասի հատուցման սահմանադրական իրավունքի գործողության նախապայման է նրա մեղքը: Եթե ոչ իրավաչափ իշխանական ակտով անձին պատճառվել է վնաս, սակայն այդ հարցում համապատասխան պաշտոնատար անձի մեղքը առկա չէ, ապա տուժողը չի կարող ակնկալել իրեն պատճառված վնասի հատուցում և նման պահանջ ներկայացնել հանրային-իրավական միավորմանը:

Այս կառուցակարգում հանրային-իրավական միավորումը հանդես է գալիս որպես պաշտոնատար անձի կողմից իրեն վերապահված լիազորությունները իրականացնելիս պատճառած վնասի հատուցման երաշխավորը: Հանրային-իրավական միավորմանը նման կարգավիճակ տալը միտված է ապահովելու վնասի հատուցման պահանջի փաստացի բավարարումը, քանի որ տիրապետելով նշանակալից նյութական միջոցների՝ այն ցանկացած պարագայում պատասխանատվության առավել հուսալի սուբյեկտ է:

Քննարկվող դեպքում (ինչպես և ընդհանուր դեղիկտի պարագայում է) գործում է վնաս պատճառելու հարցում պաշտոնատար անձի մեղավորության կանխավարկածը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, հմ. ՎԴ/1761/05/14 վարչական գործով կայացված իր որոշմամբ քննարկելով վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պայմանները, արտահայտել է հետևյալ միտքը. «*ելնելով վարչարարություն իրականացնող անձի գործառույթների բնույթից՝ վերջինիս կողմից իրականացված իշխանական գործողության արդյունքում անձին պատճառված վնասի հատուցման դեպքում վարչարարություն իրականացրած անձի մեղքը ենթադրվում է:*» [4]:

Ամեն դեպքում, սա ընդամենն ապացուցողական կանխավարկած է (որոշակի ենթադրություն, որով առաջնորդվում է դատարանը կամ այլ իրավակիրառ), որը գործի քննության ընթացքում կարող է և հերքվել:

2. Այժմ անդրադառնանք վնասը պատճառած սուբյեկտի հարցի վերաբերյալ հնարավոր երկրորդ ընկալմանը:

Հաշվի առնելով, որ պետությունը և համայնքը գործում են (իրավաբանական նշանակություն ունեցող գործունեությունը իրականանցնում են) իրենց մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով, ապա վերջիններիս գործողությունները կամ անգործությունը վերագրելի են հանրային-իրավական միավորմանը և հետևաբար համարվում են հանրային-իրավական միավորման արարքները:

Հանրային-իրավական միավորումը կազմակերպություն է, որն իր գործունեությունն (առաջին հերթին՝ իշխանական) իրականացնում է սեփական ապարատի միջոցով: Այդ ապարատն իր հերթին կազմված է հենց համապատասխան մարմիններից և պաշտոնատար անձանցից: Հանրային-իրավական միավորումը անձանց հետ ինչպես իշխանական, այնպես էլ մասնավոր բնույթի իրավահարաբերությունների մեջ մտնում է, դրանց շրջանակներում գործում է իր մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով:

Այսպիսով, պետական և ՏԻՄ-երը ու պաշտոնատար անձինք, իրականացնելով իրենց հանրային-իրավական գործառույթները, հանդես են գալիս բացառապես հանրային-իրավական միավորման անունից, և հետևաբար վնասը, որը պատճառվել է այդ ընթացքում, պատճառվել է ինքնին հանրային-իրավական միավորման կողմից [5, ս. 109]:

Գտնում ենք, որ իշխանության ակտով վնասը պատճառած սուբյեկտը հենց հանրային-իրավական միավորումն է, ով և կրում է իրավական պատասխանատվությունը՝ տրամադրելով արդարացի հատուցում:

Ճիշտ է, հանրային-իրավական միավորումն իր իշխանական գործառույթները փաստացի իրականացնում է սեփական մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով, սակայն իրենց վերապահված արտաքին ներգործություն ունեցող իշխանական լիազորություններն իրականացնելիս նրանց կատարած արարքները իրավական առումով պետք է դիտվեն որպես կատարված հենց հանրային-իրավական միավորման կողմից: Հակառակ պարագայում, առհասարակ կասկածի տակ կդրվի հանրային-իրավական միավորման՝ որպես իրավունքի սուբյեկտի, գործելու կարողությունը:

Օրինակ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *գործերը միանձնյա քննելիս դատավորը գործում է որպես դատարան, իսկ նույն օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճիռը կայացվում է Հայաստանի Հանրապետության անունից* [6]:

Նշվածից հետևում է, որ արդարադատություն իրականացնելիս դատավորը՝ պաշտոնատար անձը, գործում է որպես դատարան, որը պետական ապարատի մաս է, իսկ արդարադատության ակտը կայացվում է Հայաստանի Հանրապետության անունից, այսինքն՝ վերջին հաշվով որպես

այդ ակտն ընդունող պետք է դիտարկել հենց Հայաստանի Հանրապետությանը:

Եթե վնասը պատճառողը հանրային-իրավական միավորումն է, ապա վնասի հատուցման իրավունքի ծագման համար կարող է նշանակություն ունենալ միայն այդ սուբյեկտի մոտ մեղքի առկայության հարցը, որը պետք է արդեն բացահայտել՝ հաշվի առնելով նրա իրավական բնույթի առանձնահատկությունները:

Վնաս պատճառելու հարցում հանրային-իրավական միավորման մեղավորության գնահատումը անհրաժեշտ է իրականացնել անձանց նկատմամբ նրա ունեցած պարտականությունների պատշաճ կատարումը ձախողելու հանգամանքի լույսի ներքո: Առանձին պետական կամ համայնքային ծառայողների մեղավորության վրա շեշտադրում կատարելու փոխարեն՝ պետք է պարզել, թե արդյոք համակարգը թերացել է անձանց նկատմամբ իր ունեցած պարտականությունները կատարելու, նրանց իրավունքները երաշխավորելու հարցում:

Եթե իրավական բնույթ ունեցող, արտաքին ներգործությամբ օժտված իշխանության ակտը կայացվել է վերաբերելի իրավանորմերի խախտմամբ, ոչ իրավաչափ է, ապա դա արդեն իսկ վկայում է, որ համակարգը թերացել է իր գործառույթները իրականացնելիս, ձախողել է իր պարտականությունների պատշաճ կատարումը, ինչում էլ հենց արտահայտվում է հանրային-իրավական միավորման մեղքը:

Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է պետության պարտականությունները հիմնական իրավունքների նկատմամբ՝ նախատեսելով այդ պարտականությունների երկու դրսևորում: Ըստ այդ նորմի՝ հանրային իշխանությունը պարտավոր է մի կողմից «հարգել» իսկ մյուս կողմից՝ «պաշտպանել» հիմնական իրավունքները և ազատությունները: Դրանով սահմանադրությունն ամրագրում է հիմնական իրավունքներից բխող՝ պետության նեգատիվ և պոզիտիվ պարտականությունները [7, էջ 26]:

Իրավական պետությունում հանրային-իրավական միավորման կողմից օրենքի խախտումը, անձանց հիմնական իրավունքները չերաշխավորելը պետք է բացառված լինեն, իսկ բոլոր դեպքերում, երբ վերջինս դա չի կարողանում ապահովել, պետք է փաստել, որ համակարգը ձախողել է իր պարտականության պատշաճ կատարումը, ինչի համար էլ պետք է պատասխան տա:

Այս պարագայում առանձին վերցրած պաշտոնատար անձի կողմից գիտակցելը, որ նա գործում է օրենքի խախտմամբ կամ, ասենք, ցանկանալն անձանց համար առաջացնել անբարենպաստ հետևանքներ կրում են երկրորդական բնույթ. ավելին, երբ հանրային-իշխանական գործունեության իրականացման մեջ ներգրավված են միևնույն շղթայի մասը

կազմող մի քանի օղակներ, ապա առանձին մեղավորներին որոշակիացնելը գործնականում բարդ խնդիր է, որոշ դեպքերում անիրագործելի:

Հանրային-իրավական միավորումը կաշկանդված է անձի հիմնական իրավունքներով և ազատություններով, իսկ եթե թույլ է տալիս դրանց խախտում, ապա պետք է արձանագրել, որ իր գործունեությունն իրականացնելիս վերջինս թերացել է և հետևաբար պետք է կրի իրավական պատասխանատվություն՝ այդ թվում պատճառված վնասը հատուցելու տեսքով:

Այս կապակցությամբ, ցանկանում ենք նաև վկայակոչել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետև՝ ՄԻԵԴ) կողմից մի քանի գործերով արտահայտած դիրքորոշումն առ այն, որ *անձի համաձայնագրային (կոնվենցիոն) իրավունքի խախտման համար Բարձր պայմանավորվող կողմի պարասխանատվությունը ծագում է այն դեպքում, երբ դա հետևանք է ներպետական մակարդակում անձանց համաձայնագրային իրավունքները երաշխավորելու իր պարտականությունը չկատարելուն* [8, § 26]:

Այսպիսով, ՄԻԵԴ-ը որպես պետության պատասխանատվության հիմք սահմանում է նրա կողմից անձի համաձայնագրային իրավունքները երաշխավորելու իր պարտականության չկատարումը: Ինչպես վերը արդեն նշեցինք, հանրային-իրավական միավորումն այդ կապակցությամբ ունի նեգատիվ և պոզիտիվ պարտականություններ, որոնք համապատասխանաբար արտահայտվում են սեփական վարքագծով անձի հիմնական իրավունքների խախտումներից զերծ մնալու և դրանք երրորդ անձանց ոտնձգություններից պաշտպանելու մեջ:

Ակնհայտ է, որ առանձին վերցրած պաշտոնատար անձի (որոշ անձանց) մեղավոր վարքագծի առկայությունը կամ բացակայությունը չէ, որ պետք է կանխորոշի հանրային-իրավական միավորման կողմից անձանց իրավունքները երաշխավորելու իր պարտականության կատարումը կամ դրա ձախողումը: Եթե հանրային-իրավական միավորումը չի գործել իրավաչափ կերպով, այսինքն՝ արդյունքում խախտել է անձի իրավունքը, ապա արդեն իսկ թերացել է իր պարտականությունների կատարումն ապահովելու հարցում և պետք է կրի պատասխանատվություն:

Օրինակ՝ դատարանում գործի տևական քննության արդյունքում անձը հայտնվում է երկարատև անորոշության մեջ, այդ կապակցությամբ զգում է լարվածություն, իր գործի լուծման ձգձգմամբ պայմանավորված ունենում է բացասական ապրումներ, ինչը հիմք է հանդիսանում նրան ոչ նյութական վնաս պատճառելու փաստը հաստատելու համար:

Այս պարագայում պետությունը չի կարող վկայակոչել, որ գործը քննող դատավորը մեղավոր չէ, չափազանց ծանրաբեռնված էր և իրենից անկախ պատճառներով չի կարողացել ավարտել գործի քննությունն ու կայացնել դատական ակտ ողջամիտ ժամկետում: Պետությունը փաստա-

ցի չի երաշխավորել անձի արդար դատաքննության իրավունքը, համակարգն այդ անձի հանդեպ իր պարտականությունների կատարման հարցում ձախողվել է, թույլ տվել թերացում, որը պետք է բացառված լիներ, և ուրեմն անհրաժեշտաբար դրա դիմաց պետք է կրի իրավական պատասխանատվություն:

Հիմք ընդունելով վերը հիշատակվածը՝ նշենք, որ հանրային-իրավական միավորման գործունեության արդյունքում պատճառված վնասի հատուցման նախապայմաններ պետք է հանդիսանան հակաիրավական գործունեությունը և վնասի՝ դրա հետևանքով ի հայտ գալը:

Հանրային-իրավական միավորման հակաիրավական գործունեությունն ինքնին հիմք է տալիս պնդելու, որ վերջինս թերացել, վրիպել է, քանզի ձևական առումով նրա կողմից ոչ իրավաչափ գործելը պետք է բացառվեր:

Հանրային-իրավական միավորման թերացման գաղափարն իր մեջ կլանում է նրա առանձին պաշտոնատար անձանց կողմից մեղավոր վարքագծի դրսևորման դեպքը, սակայն ունի առավել լայն բովանդակություն և հանրային-իրավական միավորման պատասխանատվության վերաբերյալ ավելի համապարփակ ու արդարացի մոտեցում է ենթադրում:

Նույն տրամաբանությունն է, գտնում ենք, դրված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական համաձայնագրին կից 7-րդ արձանագրության 3-րդ հոդվածի հիմքում, որը սահմանում է անձի կողմից փոխհատուցում ստանալու իրավունքը սխալ դատապարտման դեպքում:

Հիշյալ հոդվածի համաձայն՝ եթե որևէ անձ վերջնական դատավճռով մեղավոր է ճանաչվել քրեական հանցագործություն կատարելու մեջ, և եթե հետագայում նրա նկատմամբ կայացված դատավճիռը չեղյալ է հայտարարվել, կամ նա ներման է ենթարկվել այն հիմքով, որ նոր կամ նոր բացահայտված որևէ փաստ համոզիչ կերպով ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա նման դատապարտման հետևանքով պարիժ կրած անձը փոխհատուցում է ստանում Կրվյալ պետության օրենքին կամ պրակտիկային համապատասխան, եթե չի ապացուցվում, որ ժամանակին այդ փաստը չբացահայտելը լիովին կամ մասամբ կախված չի եղել Կրվյալ անձից [9]:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական համաձայնագրին կից հմ. 7 արձանագրության բացատրական զեկույցում նշված է, որ ներկայացված հոդվածը կիրառելի է, երբ նոր կամ նոր երևան եկած հանգամանքը հաստատապես ցույց է տալիս դատական սխալի առկայությունը, այն է՝ դատավարության ընթացքում տեղ գտած էական թերացումը, որը հանգեցրել դատապարտված անձի համար ծանր հետևանքների: Բացատրական զեկույցում արձանագրվել է նաև, որ փոխհատուցում չի կարող շնորհվել, եթե անհայտ

մնացած հանգամանքի ժամանակին չբացահայտվելը մասամբ կամ ամբողջությամբ կախված է եղել դատապարտված անձից [10, paara 23]:

Այս պարագայում փոխհատուցում ստանալու հիմքը դատական սխալն է: Դատական սխալն արդեն միշտ պետության թերացման արդյունք է, իսկ դատավարության ընթացքում պետության անունից հանդես եկող պաշտոնատար անձանց (դատախազ, դատավոր և այլն) մոտ մեղքի բացակայությունն այն ժխտող հանգամանք համարվել չի կարող: Էական է միայն այն, որ այդ պաշտոնատար անձինք, իրենց վստահված գործառույթների պատշաճ իրականացումը, կամա թե ակամա, ձախողել են:

Ուշադրության է արժանի այն, որ անձը չունի փոխհատուցման իրավունք, եթե համապատասխան հանգամանքի ժամանակին բացահայտվելը մասամբ կամ ամբողջությամբ կախված էր իրենից: Սա ընդգծում է այն հանգամանքը, որ եթե իրականում ոչ թե համակարգն է թերացել, այլ դատական սխալը տեղ գտնելուն իր վարքագծով նպաստել է դատապարտվածը, ապա վերջինս փոխհատուցում պահանջել չի կարող:

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ եթե հանրային-իրավական միավորումն իր գործունեությունն իրականացնելիս զերծ չի մնացել իրավախախտումներից, ապա ստացվում է, որ ձախողել է իր պարտականությունների կատարումը, թերացել է անձանց իրավունքները երաշխավորելու հարցում: Հանրային-իրավական միավորման թերացման մեջ էլ արտահայտվում է նրա մեղավորությունը:

Միաժամանակ, պետությունը և համայնքը կարող են խուսափել պատասխանատվությունից, երբ կհիմնավորեն, որ վնասի պատճառումը պայմանավորված չէ իրենց կողմից թույլ տրված սխալով: Նման պարագայում վերջիններիս կողմից անձանց իրավունքները երաշխավորելու պարտականության խախտման հանգամանքը չի արձանագրվի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21:

2. **Հովհաննիսյան Գ.**, Հիմնական իրավունքների երրորդային գործողությունը կամ ինչ է ասում մեզ ՀՀ սահմանադրության 3-րդ հոդվածի երրորդ մասը., 20 էջ: Էլեկտրոնային ռեսուրս՝ <https://lex.am/docs/yerrordayin.pdf> (վերջին մուտք՝ 13.02.21 թ.):

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք (երրորդ մաս) / **Գ. Հ. Ղարախանյան, Գ. Հ. Բեքմեզյան, Տ. Կ. Բարսեղյան, Ա. Ա. Հովհաննիսյան, Ա.Մ. Հայկյան**, Խմբ.՝ Տ. Կ. Բարսեղյան, Գ. Հ. Ղարախանյան-(4-րդ հրատարակություն՝ լրացումներով և փոփոխություններով)- Եր: ԵՊՀ հրատ, 2011, 504 էջ:

4. Թիվ ՎԴ/1761/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 26.12.2016 թ. կայացված որոշումը:

5. **Рыбалов А.О.**, Еще раз об ответственности государства и его органов. Комментарий к Определению Конституционного Суда РФ // Закон. 2013. № 12, ст. 106-109.

6. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ՀՀՊՏ 2018.03.05/16(1374), ընդունվել է 08.02.2018 թվականին և մտել ուժի մեջ 09.04.2018 թվականին:

7. **Վարդան Պողոսյան, Նորա Սարգսյան**, Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ- Եր.: Տիգրան Մեծ, 2016, 448 էջ:

8. **Castello-Roberts v. United Kingdom**, 25 March 1993, Series A no. 247-C. Էլեկտրոնային ռեսուրս՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-57804> (վերջին մուտք՝ 13.02.21 թվական):

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա (փոփոխված 11-րդ արձանագրությամբ արձանագրություններով), ընդունված 04.11.1950 թվականին:

10. Explanatory Report to the Protocol No. 7 to the Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, Strasbourg, 22.XI.1984, Commentary on Article 3. Էլեկտրոնային ռեսուրս՝ <https://rm.coe.int/16800c96fd> (վերջին մուտք՝ 13.02.21 թվական):

КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО НА ВОЗМЕЩЕНИЕ ВРЕДА И ВИНА ДОЛЖНОСТНОГО ЛИЦА

АРМАН ГРИГОРЯН

Европейский университет

Статья посвящена представлению условий действия конституционного права на возмещение ущерба. Был исследован также вопрос о субъекте права, касаемо причинителя вреда, понесенного в ходе исполнения публично-властных полномочий, пояснение которого имеет важную роль в этом деле.

В свете вышеуказанного, частным предметом обсуждения стало значение вины должностного лица непосредственно исполнившего властные полномочия, привлекающее к причинению вреда. Для этой цели в статье также представлена соответствующая практика Европейского суда по правам человека, с учетом которой и были сделаны выводы относительно указанного правового вопроса.

Ключевые слова: вред, ответственность, публичная власть, должностное лицо, вина, оплошность, основные права.

CONSTITUTIONAL RIGHT TO COMPENSATION FOR DAMAGE AND THE GUILT OF THE PUBLIC AGENT

ARMAN GRIGORYAN

European University

The article is devoted to the presentation of the conditions necessary for the operation of the constitutional right to compensation for damage. The issue of the subject causing damage in the execution of public authority has also been examined, the clarification of which plays an important role in this case.

In light of the above, the particular subject matter has been the relevance of the official's guilt, straightforwardly implementing public authority. For that purpose, the article also contains the relevant practice of the European Court of Human Rights, which is taken into consideration while making conclusions concerning the mentioned legal issue.

Keywords: damage, responsibility, public authority, official, guilt, mistake, basic rights.

*Ներկայացվել է խմբագրություն 02.04.2021
Երաշխավորվել է տպագրության 23.05.2021*